Հաշվետվություն

2019 թվականի հուլիսի 21-ից 24-ը Վրաստան (Թբիլիսի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արայիկ Սահակյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կաղաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վրաստան, Թբիլիսի, 2019 թվականի հուլիսի 21-ից 24-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   Վրաստանի հանրային ռեգիստրի ազգային գործակալություն:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Ճանաչողական այցի շրջանակում Վրաստանի հանրային ռեգիստրի ազգային գործակալության իրականացրած բարեփոխումների, ձեռքբերումների և ընթացիկ ծրագրերի ուսումնասիրում, ոլորտում առկա խնդիրների ու դրանց լուծման ուղիների համատեղ քննարկում և երկու գերատեսչությունների միջև առաջավոր փորձի փոխանակություն:

6. **Քննարկված թեմաները.**
   Այցի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ հետևյալ հարցերի վերաբերյալ.
   - Ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված թափանցիկ և անվտանգ միասնական գրանցման համակարգի ստեղծման նպատակով օրենսդրական, ինստիտուցիոնալ, տեխնոլոգիական և վարչական բարեփոխումների իրականացման Վրաստանի փորձը,
   - «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) վարկանիշում ձեռք բերած հաջողություններ սեփականության գրանցման ոլորտում,
   - Էլեկտրոնային արխիվի ստեղծման ու օգտագործման, տվյալների թվայնացման, փաստաթղթերի տեսաներածման և տվյալների որակի կառավարման գործընթացների կազմակերպումը,
   - Հարցումների մշակման, տեղեկատվության մշակման և տրամադրման կատարելագործումը,

- Բլոկչեյն տեխնոլոգիաների կիրառումը անշարժ գույքի գրանցման և տվյալների պահպանման գործընթացում,
- Էլեկտրոնային ծառայությունների տեսակները և դրանց մատուցման եղանակները,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի, երկրատարածական տեղեկատվական համակարգի և կադաստրային տվյալների մշակման աշխատանքների կազմակերպման հիմունքները,
- Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի մշակման և գեոդեզիայի ու քարտեզագրության զարգացման փորձի ուսումնասիրումը,
- Հասցեների ռեեստրի վարման առանձնահատկությունները,
- Հանրային ռեգիստրի ազգային գործակալության տարածքային գրասենյակների աշխատանքային պայմանները և գործառույթները:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Կադաստրի կոմիտեի պատվիրակության կազմում էին նաև Կոմիտեի հաշվառման և հողաշինության վարչության պետ Սասուն Կիրակոսյանը, գույքի գրանցման վարչության գրանցման բաժնի պետ Էդգար Պետրոսյանը, նույն վարչության մեթոդաբանության բաժնի պետ Էդգար Գրիգորյանը, սպասարկման մեթոդաբանության և համակարգման վարչության համակարգման և մշտադիտարկման բաժնի գլխավոր մասնագետ Նաիրա Խաչատրյանը, գնումների կազմակերպման բաժնի փորձագետ Իրինա Մերդինյանը, միջազգային կապերի բաժնի գլխավոր մասնագետ Վազգեն Բորյանը, «Կենտրոն» սպասարկման գրասենյակի գլխավոր մասնագետ Ադելինա Խալիֆյանը:

Քննարկվող հարցերի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն: Տեղի ունեցան հանդիպումներ Վրաստանի հանրային ռեգիստրի ազգային գործակալության նախագահ Իվանե Ցարցիձեի և առանձին ստորաբաժանումների ղեկավարների ու մասնագետների հետ:

Այցելություն և արդյունավետ քննարկումներ կազմակերպվեցին նաև միասնական արխիվի առանձնացված ստորաբաժանումում, ինչպես նաև Գորի քաղաքի տարածքային գրասենյակում:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Այցի արդյունքում որոշվեց պարբերական դարձնել երկու գերատեսչությունների միջև ոլորտի բարեփոխումներին միտված փորձի փոխանակությանն ուղղված մասնագիտական և փորձագիտական շփումներն ու փոխայցելությունները:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.**

Առաջարկում ենք Կադաստրի կոմիտեում ծրագրած բարեփոխումների իրականացման ընթացքում կիրառել Վրաստանի հանրային ռեգիստրի ազգային գործակալության կուտակած հարուստ փորձը, ինչպես նաև քննարկել բարեփոխումների իրականացմանն

ուղղված եվրոպական համապատասխան կառույցների կողմից տեխնիկական աջակցություն ստանալու հնարավորությունների հարցը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արայիկ Սահակյան 25.07.2019 թ.